Վ Ճ Ռ Ե Ց

1. «ՏՆՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ ընկերությանը ցուցակից հեռացնելու պահանջների մասին, մերժել հայցային վաղեմության ժամկետը հայցվորի կողմից բաց թողնվելու հիմքով:

2. «ՏՆՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հօգուտ «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության բռնագանձել 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

3. Վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից վերացնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 12.03.2026 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը:

4. Դատական ծախսերի, այդ թվում՝ պետական տուրքի հարցը համարել լուծված:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և հրապարակման պահից մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ **Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEEC-5E23-4AF0-B197 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am